

բարյան մատենադարանում: պահպանող հարուստ նյութերը և այլն:

Անշուշտ, գրախոսվող աշխատությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնք, սակայն, կրում են մասնակի, ոչ սկզբունքային բնույթ: Մասնավորապես կան հարցեր, որոնք կարելի էր լուծարանել ավելի հանգամանորեն, օրինակ՝ Այնթապի և Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը, Ֆրեդերնակի կոմիները և այլն: Այնուհետև, մեր կարծիքով մի շարք դիվանագիտական փաստաթղթերի մեջբերումները կարելի էր

տալ առավել կրճատ ձևով կամ հեղինակի շարադրանքով:

Ռ. Գ. Սահակյանի աշխատությունը գրված է գիտական հմտությամբ, տեսական պատշաճ մակարդակով և նյութի խոր խմացությամբ: Ստացվել է ինքնատիպ, գիտական լուրջ արժանիքներով օժտված մի աշխատություն, որը կարևոր ենթադրում է ինչպես հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման, այնպես էլ սովետական քաղաքականության բնագավառում:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԲԱՅՈՒՐՅԱՆ

Le livre Arménien a travers les ages. Marseille, 1985

Վերջերս Ֆրանսիայում (Մարսել) լույս տեսավ մի աշխատություն, ուր առանձին գլուխներ տրամադրված են հայ ժողովրդի գրքին, ապա որոշ գլուխներ՝ «տպագիր գրքին»: Այս աշխատության ստեղծմանը մասնակցել են բազմաթիվ հեղինակներ:

Առաջին գլխում Մ. Սալվինին նկարագրում է հայ գրերի գյուտից առաջ գոյություն ունեցող գրերը պատմական Հայաստանում: Նախ հիշում է Վանի թագավորության սեպագիրը, տալով մի քանի նմուշներ և հատկապես Արգիշթի արքայի՝ էրեբունի (հրեան) քաղաքի հիմնադրման սեպագիր արձանագրությունը լուսանկարով, ուրարտերեն բնագրով (տառադարձությամբ) և ֆրանսերեն թարգմանությամբ: Երկրորդ գիրքը, որ Հայաստանում օգտագործվել է, արամեականն է: Այդ լեզվով գրված մի քանի արձանագրություններ հայտնաբերվել են Արտաշես արքայի (189—160 մ. թ. ա.) թագավորության շրջանից: Երրորդ գիրքը հունականն է, որն օգտագործվել է արամեականին դուգահեռ: Հեղինակը հիշում է ևրվանդունիների ժամանակաշրջանից Արմավիրում հայտնաբերված արձանագրությունները: Առում և կարագրում է հայոց Տրդատ Արշակունի թագավորի (66—88) թողած Գառնիի հունարեն հայտնի արձանագրությունը: Հայաստանում գրտնրվել են նաև լատիներեն արձանագրություններ, որոնք հռոմեացիների կողմից են գրվել:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է հայոց այբուբենի գյուտին (հեղինակ Ֆ. Ֆելդի): Նա նշում է, որ IV դարում Հայաստանում օգտագործվում էին հունարենն ու հատկապես ասորերենը, որն առավել հանդուրժելի էր 387-ի բաժանումից հետո Մեծ Հայքի մեծագույն մասնի՝ աղղեցության տակ վերցրած Սասանյան Պարսկաստանի համար: Հայոց Վառաշապուհ արքայի և Սահակ կաթողիկոսի աշակցությամբ Մեսիպ Մաշտոցը ձեռնարկեց հայոց գրերի ստեղծ-

ման գործին: Ըստ Ֆ. Ֆելդի, Մաշտոցը որպես հիմք վերցրեց հունական գիրը, ավելացնելով հայերենին հատուկ հնչյունների համար համապատասխան գրեր: Նկարագրում է գրի տեսակները՝ երկաթագիր, բուրգիր ու նոսրգիր. ապա լուսանկարներով ու բացատրությամբ ներկայացված են Երուսաղեմում հայտնաբերված VI դարի և Մրենի VII դարի արձանագրությունները, ինչպես նաև էջմիածնի Ավետարանից և այլ գրչագրերից գրչության հնագույն նմուշներ և այլն:

Այս գլխում (առանձին բաժնով) Ժ.—Պ. Մահեն հետաքրքրական մի նորություն է հայտնում. «Հայոց լեզվի մասին հնագույն օտար վկայությունը՝ Օթլունի բառացանկը» (Le Glossaire d'Autun) խորագրով: Ըստ նրա, Բագրատունյաց թագավորության շրջանում հայերը հարաբերություններ են ունեցել ոչ միայն Բյուզանդիայի, այլև միջնադարյան Եվրոպայի հետ: IX—X դդ. մի լատին անանուն գրիչ, առիթ ունենալով գրուցելու ոմն հայի հետ (որն արևմտաքում է գտնվել), նրանից գրի է առել մի բառացանկ՝ բաղկացած 90 հայերեն բառերից: Այդ բառացանկը գրված է IX—X դդ. մի լատիներեն ձեռագրի մեջ, որը գտնվում է Օթլունի (Ֆրանսիայի միջին մասում, Սաոն և Լուար շրջանում) քաղաքատարանի գրադարանում:

Հեղինակը հարց է տալիս՝ արդյոք սա խոսակցական լեզվի ձեռնարկ է, թե՞ գիտական սոսկ հետաքրքրություն: Համենայն դեպս, դա կարևոր փաստաթուղթ է, քանզի այդ դարերից հայերեն ամբողջական ձեռագրեր մեզ քիչ են հասել: Բառացանկում հայերեն բառերը գրված են լատինատառ և դժանցը՝ լատիներեն իմաստը: Ելնելով այն փաստից, որ բառացանկում հայերենի չ տառի դիմաց հաճախ գ է գրված, Ժ.—Պ. Մահեն եզրակացնում է, որ այդ անհայտ հայ անձնավորությունը եղել է Արևմտյան Հայաստանից, քանզի հենց այդ դարերում Հայաստանի

արևմտյան նահանգներում կ խուլ հնչյունը արտասանվել է ձայնեղ գ և հակառակը: Այսպես, բառացանկում «լուսնկայ» հայերեն բառը տառադարձված է lucenga, ուր նաև բառավերջի յ տառը չի արտահայտված:

«Հայերի բառեր և ասացվածքներ» (Verba seu dictiones Armeniorum) վերնագրի տակ տրված բառերից մի քանի օրինակներ են բերված kyrach-կիրակի, ergout xapic-երկուշաբթի, ապա թվականներ (մեկից հազար) mec-he-մեկ, ergout-երկու, eriec-երեք, ապա տարբեր բառեր haz-հաց misc-միս, chini-գինի:

Այս հատվածում տպված է Ժերմինյի-լե-Պրես (Germigny-les-Près, Օրլեանի շրջանում) եկեղեցու լուսանկարը, որի տակ մակագրության մեջ ասված է, որ այն կառուցել է հայազգի ճարտարապետ էոգ լը Մեսնը (Eude le Messin) IX դարում, հարևոս Մեծի (768—814) օրոք (էջ 46—49): Իրոք, եկեղեցու վրա երևում են հայկական ճարտարապետական ոճի հետքերը, մանավանդ որ ուռնական ոճը ընդհանրություններ ունի հայկականի հետ:

Երկրորդ գլխի շարունակության հեղինակն է դարձյալ Ժ.—Պ. Մահեն: «Հայկական ձեռագրերը» վերնագրի տակ նա շեշտում է, որ վաղ միջնադարի հայ մատենագրության մեջ մեծ տեղ է զբաղում կրոնականը, իսկ XIII—XIV դդ. ի հայտ է գալիս զուտ աշխարհիկը: Այն ժամանակ եկեղեցական մատենագրության լեզուն գրաբարն էր, իսկ ժողովրդական լեզուն բանաստեղծներն էին գործածում:

Նա նշում է Հայաստանի բարձրագույն դրպրոցներում աշխարհիկ ուսումնառության առկայությունը, ընդ որում եռյակ ուսման ծրագիրը (trivium) ընդգրկում էր՝ քերականությունը, հոնտորությունը և իմաստասիրությունը, իսկ քառյակ ուսման ծրագիրը (quadrivium) ուներ թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը: Քերականության ձեռնարկն էր Դիոնիսիոս Թրակացու երկը, հոնտորությունը՝ Քերվինի և Պիտոլից գրքերը, արամաբանությունը՝ Արիստոտելի մեկնությունները և Դավիթ Անհաղթի Սահմանքը:

Ժ.—Պ. Մահեն հակիրճ կերպով շարադրում է հայ մատենագրության տարբեր բնագավառների զարգացման ընթացքը մինչև XVIII դար: Ապա տարբեր ձեռագրական հավաքածուներից (Վենետիկի Մխիթարյան վանքի, Փարիզի Ֆրանսիական ազգային գրադարանի, Մարսելի քաղաքային գրադարանի և մասնավոր հավաքածուների) նմուշներ են նկարագրված և գունավոր լուսանկարներով ներկայացված ծխական, աշխարհիկ գիտությունների (Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, Անանիա Շիրակացու Տո-

մարը) դավանաբանական, պատմական (Խաչատուր Կեչառեցու Ալեքսանդրի պատմությունը), իրավագիտական (Լեւոնայոց դատաստանագիրքը), բանաստեղծական (Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան», Ներսես Շնորհալու «Յիսուս որդի») երկեր:

Այս աշխատության երրորդ գլուխը նվիրված է հայերեն տպագրի գրքի պատմությանը, որի «կազմավորման շրջանին» (1511—1715) հեղինակն է Ռ. Գեորգյանը: Այստեղ հատուկ քարտեզի վրա նշված են XVI—XVII դդ. հայկական տպարաններ ունեցող քաղաքները թվականներով՝ XVI դարից Վենետիկը (1511), Փարիզը (1538), Պավիան (1539), Կոստանդնուպոլիսը (1567), Հռոմը (1584), ապա XVII դարից Լիովը (1616), Միլանը (1621), Նոր Զուղան (1636), Լիվոռնոն (1641), Ամստերդամը (1658), Մոսկվան (1672) և Պադուան (1690): Նկարագրված և լուսանկարներով ներկայացված են (Վենետիկի Մխիթարյանների գրադարանից և Փարիզի ազգային գրադարանից) Հակոբ Մեղապարտի Վենետիկում լույս ընծայած գրքերը, փայտագրությունների լուսանկարներով. Հռոմում 1584-ին հրատարակված «Տոմար Գրիգորեան» գիրքը տիտղոսաթերթով, Ֆ. Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանը (Միլան, 1621) և հայերենի քերականությունը (լատիներեն, Միլան, 1624), Աստվածատուր Ներսեսյանի լատիներեն-հայերեն բառարանը (Հռոմ, 1695): Հետաքրքրական է Փարիզի Կոլեժ դը Ֆրանսի դասախոս Գ. Պոստելի հրատարակած 12 լեզուներով «Հայր մերը» (Փարիզ, 1538), ուր կա նաև հայերեն բնագիրը: Շահեկան է նաև Լ. Թուրնայսերի գիրքը (Բեռլին, 1583), ուր տպագրված է հայերեն մի հատված Մատթեոսի ավետարանից, որի տառերը գոթական ոճով են մշակված:

Երրորդ գլխի երկրորդ մասում Գ. Ուլուհոճյանը ներկայացրել է «Հայկական տպագրության դասական շրջանը» (1715—1840): Այս ժամանակաշրջանի տպագրական կյանքի շարադրանքից հետո նկարագրված և լուսանկարներով ներկայացված է Կոստանդնուպոլսի, էջմիածնի, Վենետիկի Մխիթարյանների, Տրիեստի ու Վիեննայի Մխիթարյանների, Երուսաղեմի և Նոր Զուղայի տպարանների գործունեությունը:

Երրորդ գլխի երրորդ մասը նվիրված է 1840—1915 թթ. հրատարակված հայ գրքին, որի հեղինակ Լ. Զեքիյանը նախ վերլուծում է արեւմտահայ իրականության մեջ նոր երևույթների առաջացումը, աշխարհարարի հանդես գալը, հա-

¹ Պավիայում հրատարակվել է T. A m b r o, g i o. Introductio in Chaldaicam linguam atque Armenicam. Pavia, 1539.

լագրտական երկերի լույս ընծայումը, մամուլի ծաղկումը, շեշտելով՝ Լ. Ալիշանի պատմաաշխարհագրական արժեքավոր մենագրությունների հրատարակումը, ապա, անդրադառնալով արևելահայ իրականությանը, նշում է հատկապես Խ. Արովյանի Բացառիկ դերը, արևելահայ գրականության և մամուլի դարգացումը:

Յեղեղներս վերնագրի տակ Կ. Հովսեփյանը (երրորդ գլխի չորրորդ մաս) նշում է, որ հակառակ 1915-ի մեծագույն ողորդության ժամանակ հայ ժողովրդի տված գոհերին, հայը մնացել է ամառ կառուցող և մշակութային արժեքների սիրահար, որի վկայությունն է մշեցի հայ կանանց Ս. Առաքելոց վանքի «Մշո ճառքնտիր» կոչված հսկա ձեռագիրը մեծ զոհողությունների զոհվ Արևելյան Հայաստան հասցնելը. այդ գրչագիրն այժմ դարդարում է Նրևանի Մաշտոցի անվան Մատենադարանը:

Գրքի վերջին հատվածում (երրորդ գլխի հինգերորդ մաս) Գ. Պելետյանը խոսում է նախ Սովետական Հայաստանի հրատարակությունների մասին, ընդգծելով Հ. Աճառյանի Արմատական բառարանի, Ս. Մախսյանի Բացատրական բառարանի և Հայկական հանրագիտարանի լույս ընծայման նշանակությունը: Հատկապես նշում է հայ նշանավոր գրողների ստեղծագործություննե-

րի հրատարակությունները, գրական, գեղարվեստական և գիտական մամուլի զարգացման փաստը: Հիշում է, որ միայն 1984-ին Հայաստանում լույս է տեսել 1200 անուն գիրք, իսկ սովետական այլ հանրապետություններում՝ 300 անուն գիրք:

Ապա անդրադառնալով սփյուռքային մշակույթին՝ շեշտում է հայ գրողների ստեղծագործությունների հրատարակումը, հայ մամուլի զարգացումը (թե՛ հայերեն, թե՛ եվրոպական լեզուներով), հիշելով, որ շարունակում են հրատարակվել «Բազմավեպ» և «Հանդես Ամսօրյա» հանդեսները, «Հայկական ուսմանց հանդեսը» (Ֆրանսերեն), Ընդգծում է Իտալիայում երեք լեզվով (իտալերեն, անգլերեն, հայերեն) հրատարակվող հայ ճարտարապետական հուշարձաններին նվիրված մատենաշարը, որի տասնհինգերորդ հատորն արդեն լույս է տեսել: Հայագիտության համար կարևոր նվաճում է նաև Նրուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի գրչագրերի ձեռագրացուցակը՝ կազմված Ն. Պողարյանի ջանքերով:

Այս աշխատության լույս ընծայումը կօգնի ֆրանսերեն ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթանալ հայ մշակույթի անցյալին ու ներկային:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ: